1185. ԵԿԵՂԵՑԻ. որմին, 1 տող.

ՍԲ ՅՈՀԱՆՆԷՍ:

Հրատ. Գ. Շախկյան, Լոռի, 24:

Ծանոթ. Հովհաննես Սկրտչի անվանագիրը փորագրված է XIX դ. վերանորոգության ժամանակ:

1186. ՏԱՊԱՆԱՔԱՐ. եկեղեցու շրջապատի գերեզմանոցում.

Այս է հանգիստ Մանկասարին: [Թվին] ՌՆԺ (1661):

Հրատ. Մուրադյան, ՀՎԱ, 151:

Ծանոթ. Պ. Մուրադյանի հավաստմամբ՝ այստեղ է նաև Ակոբի 1716 թ. տապանագիրը (նույն տեղում), իսկ Ս. Հովհաննես եկեղեցու մոտ «թաղված է 1853 թ. վախճանված Տէր Մխիթար Գերանուանի» վարդապետը (ՀՎԱ, 152): Կան նաև վրացերեն արձանագրություններ:

ՍԱՄՑԵՎՐԻՍ

Եռազգ բնակչությամբ փոքրիկ գյուղ է Վրաստանի Բոլնիս քաղաքից հարավ-արևմուտք, հայաստանամերձ անտառի փեշին: Տեղանքին քաջածանոթ Ավետիք Ենգոյանը տևական պրպտումների շնորհիվ պարզել է, որ այդ տարածքի ծորակներում, հարթավայրերում, առվակների եզրերին ու լեռնածերպերին կան լքված-ամայացած բնակատեղիներ, ամրոցներ (Շանշիղուլա), եկեղեցիներ ու գերեզմանոցներ, որոնք վկայում են մինչև XVII դ. վերջերը հայերով բնակեցված լինելու մասին: Այնուհետև, XVIII դ. սկսած ներգաղթող հայերը վերաբնակվել են հին գյուղերում կամ հիմնարկել նորերը, որոնցում դեռ ապրում են հայալեզու կամ ազգությունն իսպառ մոռացած նրանց ժառանգները:

Սամցեվրիս գյուղի հարավային եզրում կանգուն է եռահարկ մի շինություն՝ շրջապատված ընդարձակ գերեզմանոցով: Անկանոն քարով շարված կառույցը տեղացիները կոչում են զանգակատուն: Դրա առաջին հարկը երկու կամարների վրա նստող թաղով աղոթարան է, երկրորդը՝ նույնպես, իսկ երրորդ հարկաբաժինը բազմանիստ ութ սյուներով, աղյուսաշար նիստերով զանգակատունն է:

1187. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ. սյան խոյակին, գեղագիր.

ՍԱՐ[ԳԻ]Ս:

Ծանոթ. Շինարար վարպետի անվանագիրն է: Հավանաբար նա 1652 թ. Սանահնի վանքը վերանորոգող ուստա Սարգիսն է, որն իր ժամանակակից, Հաղբատավանքը նորոգող Նավասարդ Առնջեցի շինարար-ճարտարապետի հետ եկեղեցական շինարարություն է ծավալել մոտակա Շուլավերի և Բոլնիսի շրջաններում:

1188. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գանգակատան մոտ, նժույգի հարթաքանդակի գավակին, 2 տող և շիրմաքարի ծախ եզրում, 9 տող.

Թ Ռ-Ժ Ի	ԹՎ[ԻՆ] ՌՃԻ
Բ	Բ (1673):
ԿԱՄԱԻՆԱՅ▨Ը	ԿԱՄԱԻՆ ԱՅ [ԵՍ]՝ Շ-
ՄԱԴՈՒԽՏՍԸԻ	ԱՄԱՆԴՈՒԽՏՍ. ՇԻ
ՆԵԼՏՈՒԻ Է ՎԵ	ՆԵԼ ՏՈՒԻ Է (7) ՎԵ-
ՄՍՅԻՀԱՏԱԿԷՀ	ՄՍ: ՅԻՇԱՏԱԿ Է Հ-
▨ՈՅՆ ՊԱՐՈՈ	[ՈԳ]ՈՅՆ ՊԱՐՈՆ
ԲԷԺԱՆԻՆՈՐԴ-	ԲԷԺԱՆԻՆ ՈՐԴ-
ՈՑՆ ՄԵՐՈՑ▨	ՈՑՆ ՄԵՐՈՑ...
▨▨▨Է ՎԱԶ	...ԷՎԱԶ
ԻՆ ԶՈՒՐԱՊԻՆ	ԻՆ, ԶՈՒՐԱՊԻՆ:

Ծանոթ. Շիրմաքարի մի նիստին պատկերված է իշխանավորի գավազան, հարավային ճակատին՝ մարդու հարթաքանդակ ձեռքին նիզակ, ականջավոր գլխարկով, գոտկատեղում երկու խանչալով, ձի՝ վրան բազե: Էվազի նախորդ բառը չի հասկացվում: Այստեղ են նաև ակնարկված 7 վիմերից 6-ը՝ առանց գրության, զարդաքանդակներով պատված:

1189. ԽԱՉՔԱՐ. նույն գերեզմանոցում, դեղնավուն քարից, եզրանիստերին.



ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉՍ ... ԹԱՆԴՈԹՈՒՆ:

Ծանոթ. Խաչքարը բնորոշ է XVII դարին: Անունից առաջ թերևս գբաղմունքը մատնանշող բառն է՝ թերևս ԴԱՍԱԲ:

1190. ԽԱՉՔԱՐ. Սամցեվրիս գյուղից 2,5կմ արևելք, անտառի մեջ, սլաքաձև խորանով, քիվին 2 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽ[ԱԻ]Ս Է	ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽ[ԱԻ]Ս Է
Զ ԱԼՆ ԻՆ ԹՎ Ռ-ՃԺԲ	ԶԱԼ[Ի]ՆԻՆ: ԹՎ[ԻՆ] ՌՃԺԲ (1663):

Ծանոթ. Գյուղատեղիում պահպանվում է կոպտաշար եկեղեցի՝ 8 կարճ սյուներով գանգակատնով: Այս խաչքարը մամռապատ է, քիվը՝ խիստ առաջակարկառ: Տապանաքարերի վրա գերիշխում են մարդկանց, ձիերի, նվագարանների (սազ), սափորների, զենքերի պատկերաքանդակներ: Դագաղաձև մի շիրմաքար ունի վրացերեն արձանագրություն: